

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԱ

Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու բիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ֆր.
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԵՍԵՆ

Դրանոցման տուր
20 անդրիս



Լ Ր Ա Պ Ի Ր

Ա Ձ Փ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշիրնիք եւ

չեւ տրոշիր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ի

Ա. հատորը. իսկ Բ. հատորին՝ որ առաջինին գրեթէ կրկին մեծորոշման կոչման, մեծ մասը տպագրուած է:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻ, ԳԻՆԸ 2 ՖՐԱՆԿ

Բ. հատորին լրանալէն վերջ գինը պիտի աւելցնենք. բայց որով որ կանուխ եւ ածան ստանալ կոչման, միւսեւ յառաջիկայ Յոննուարի կէսը 2 ֆրանք մեզ դրկելու եւ, վստահ ըլլալով թէ Առաջին հատորը անմիջապէս կը ստանան եւ իւր ալ ոչ ալեքսան ոչ:

10 օրինակի դրամ դրկողը 11 օրինակ կը ստանայ:

ՉԸ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ

Մեր այն բաժանորդները որոնք ցարդ իրենց բաժնեկիցները չեն վճարած, թող հաճին ընդ փոյր դրկել, նկատելով թէ տարեշրջանը կը լրանայ:

ԺԱՄՋԱՐԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մասկուայէ ստացուած հեռագիրները հաղորդեցին ի. Ժամհարեանի սպանութիւնը եկեղեցւոյ մէջ՝ պարսկահպատակ հայու մը ձեռքով: Այս սեւ լուրը մասնաւորապէս Մարաշի որբանոցին 200ի մօտ որբերը, բարձրագոյն վարժարաններու մէջ ուսանող քանի մը տասնեակ հայ պատանիները, Եւլիի նորակառոյց Ժամհարեան հիւանդանոցի պատասպարները եւ դեռ շատեր լաց ու կոծի ենթարկեց, անոնց ներկան մթաքնեց եւ ապագան ոչնչացուց: Իսկ ընդհանուր հայութեան համար ինչ տպաւորութիւն կը գործէ եւ ինչ հետեւանք կրնայ ունենալ հայ խմբակի մը կողմէ գործուած այս սպանութիւնը: Ահա խորհրդածելու կէտը այս է:

Եթէ հայ յեղափ. կուսակցութեան մը նպատակը չուզող հայ հարուստ մը սպաննելու մէջ՝ կու-

սակցութիւն մը չը խղճահարուիր, գոնէ Ժամհարեանի նման ազգային բարերար մը սպաննելու մէջ խղճահարուելու էր: Կը հասկնանք թէ փոքր, եկեղեցի չի ունէր ա, դ կուսակցութեան համար նշանակութիւն չունենայ. բայց ազգային աղէտին մէջ, կոտորածներու տուն թուրքէն ջարդուող նահատակներու հարիւրաւոր ուրիշները պատասպարող, բազմաթիւ հայ պատանիներ դաստիարակող, հայ հիւանդներ խնամող բարերար մը սպաննելը ոչ թէ հայրենասիրական գործ մը, այլ ազգադու ոճիր մըն է. իսկ հայ բարերարներ այս կերպ անագորոյն վարձատրութիւն մը տեսնելով կը քստմնին եւ ամէն բարեգործութեանէ ձեռք կը քաշեն: Հայ ազգին թշնամի թագակիրները եւ պետութիւնները միայն ուրախ կրնան ըլլալ Ժամհարեանի նման հայ բարերարներու սպանութեամբը. որովհետեւ այս կարգի սպանութիւններ կը ծառայեն անոնց յայտնի կամ թաքուն ծրագիրներու գործադրութեանը: Հայաստանը եւ կովկասը առանց հայու ձգելու համար, նախ հայ ժողովուրդին ուժեղ եւ արիւնտ երակները կտրել պէտք է, որով անոր շատ մը ստորաբաժաններն ալ կեանքէ, ապրուստի միջոցներէ զրկուին: Հետեւապէս հայ ազգին ներքնապէս թշնամի եղող պետութիւնք հայ խմբակի մը կողմէ սկսուած գործունէութեան այս

եղանակը ոչ թէ արգիլողներ, այլ գիւրացողներ կրնան ըլլալ. եւ մեզ երբեք զարմանք չպիտի պատճառէ երբ իմանանք թէ մէկ երկու կուսակցութիւններ աչք կը գոցեն այդ խմբակի այսօրինակ գործունէութեան տոջեւ:

Քանի մը ամիս առջ Ժամհարեանի առեւանգման մասին բոլորք բաւձող արտասահմանի հայ թերթեր, ինչպէս Սիւննիս, խրդիրը մեր տեսութեանէն տարբեր տեսակէտէ մը քննելով, եզրակացուցին թէ՝ կիսաքի, ինչքի եւ գաղափարի ազատութեան համար կռուելու նպատակաւ կազմուած կուսակցութիւն մը նոյնիսկ իր սկզբունքին դաւաճանած կրկնաբար բռնի կերպով մէկուն ինչքը յափշտակել կուզէ: Բայց մենք աւելի ազատ մտածելով, ենթադրենք թէ այդ խմբակը նպատակը միջոցը կարողարարեց Լոնտայի ճիզվիթական վարդապետութեան կը հետեւի. նոյնիսկ այդ վարդապետութեամբ Ժամհարեանի մը սպանութիւնը չի կրնար արդարաւայլ: Ընդունինք որ անոք հայրենիքը ազատելու նուիրուած կուռող բանակին համար դրամ հաւաքել կը ջանն. նուիրական նպատակ մըն է այս. բայց այդ բանակին մէջ կարմիր խաչի Ընկերութեան դեր կատարող, այսինքն ինկածները դարմանող, անոնց որբերը պատասպարող եւ գաղափարի ապագայ զինուորներ պատրաստող Ժամհարեանի մը սպաննումը ո՞ր խղճով, ո՞ր սկզբունքով եւ ո՞ր վարդապետութեամբ կարելի է արդարացնել: Ափրիկէի վայրենիներն անգամ իրենց դէմ կուռող թշնամի բանակին մէջ գտնուած կարմիր խաչի անդամները երբ ձեռք անցուցած են՝ ոչ միայն չեն սպաննած, այլ անոնց հետ յարգանքով վարուած են:

Ոճրին հեղինակները պիտի ջանան առարկել թէ Ժամհարեանը 30,000 ռուպլի չը տալէ զատ՝ ուսուկաւարութեան իմացուց իր առեւանգման դէպքը, հետեւաբար մատնութիւն գործած եղաւ, եւ մատնիչ մը սպաննել պէտք է:

Կը պատասխանենք.

Ժամհարեանը զինք առեւանգողները եթէ հայրենիքի ճշմարիտ անձնուէր զինուորներ ճանչնար, անկասկած, չը պիտի վարանէր պահանջուած դրամը անոնց յանձնելու: Քանի որ ինք այդ գումարին քանի մը պատիկը ամեն տարի կամուրջի կը նուիրէր ազգասիրական ու բարեգործական նպատակներու: Ժամհարեանի եթէ այդ դրամը զինք առեւանգողներուն չը տուաւ, ասկէ բացօրոյ կերեւայ թէ կամ զանոնք պարզ դրամաշորթներ կարծեց (եւ ինչպէս կարելի էր տարբեր կարծիք կազմել, քանի որ ինք ազգային բարերար մը ըլլալով, իր տուած կամուրջ նուէրներուն մէկ հարիւրերորդին չափ գումար մը իրմէ առնելու համար ապերախտաբար իր հետ այդչափ կոշտութեամբ կը վարուէին յանուն ազգին), եւ կամ անոնց պատկանած խմբակին գործունէութեան եղանակը ազգասպան կը նկատէր: Ժամհարեանը իր այս կարծիքին ու նկատողութեանը մէջ ազատ էր, ինչպէս ամէն անհատ, եւ ինք իրեն համար արդէն ազգանուէր ուղի մը ընտրած էր, ազգին որբերը, հիւանդները պատասպարելու եւ աղքատ պատանիներ դաստիարակել տալու: Հետեւաբար նա զինք առեւանգողներու մասին իր կազմած կարծիքին համեմատ միայն վարուեցաւ: Կարծիքի ազատութիւնը ազատամտութեան էն առաջին պայմանն է: մանուսանդ երբ կարծիքը կը բղւի այնպիսի մտքէ մը՝ որ միշտ բարեգործութիւն մտածած է՝ պէտք է յալ գուր մտքի ու գաղափարի ազատութեան տարրական պայմանները ճանչցող ամէն անհատէ:

Քանի որ, Ժամհարեան զինք առեւանգողները յափշտակիչներ ճանչցաւ, պարտաւորուեցաւ իմացընել կառավարութեան թէ իր գործը դրամաշորթներու հետ էր, ոչ թէ ապստամբներու: Իսկ ուսուկաւարութիւնը իբրեւ դրամաշորթներ հետապնդեց զանոնք: Եթէ ասոնք թուրքերի դէմ գործող ճշմարիտ հայ յեղափոխականներ իսկ եղած ըլլան, օտար կառավարութիւն մը զանոնք իբր քաղա-

քական յանցանործներ չը պատժեր, այլ շատ շատ երկրէն դուրս կը հանէ. այս օրէնքի կարգ անցած միջազգային ընդհանուր սովորութիւն մըն է:

Ուստի չէ կարելի յիշատակել այդ բնութեան ոչ մասնութիւն կոչելու ոչ զաւանդանութիւն. այդ եզական հայ բարեբարբէնքի մը դժբախտ զոհն եղաւ, որուն համար հազարաւոր բարեբարբէնքներու լաց ու կոծին կը մասնակցի տմբող հայ ժողովուրդը, ցուելով որ դրամաշորթութեան այդ օրինակ զէպքի մը յեղափոխական գործունէութեան խնդիր կը խռնուի:

ԳՈՒՐՊԷՅ

ՕՐՈՒՈՒՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Ռուսիոյ արտաքին գործերու նախարար՝ կոմս Լամստորֆի Սօ. Ֆիալի ու Պէլկրատի ուղիով՝ Վիէննա ըրած այցելութիւնը՝ Մակեդոնիոյ առկա խնդրոյն կարգադրութեանը մօտաւորութեանը նպատակով լուծում մը բերել կը խոստանար. ոչ միայն պոլկար մամուլը, ժողովուրդն ու մակեդոնացի տարրը, հայրենասիրական ծայրայեղ խանդավառութեանց անձնատուր, արդէն իսկ մակեդոնական անկախութիւնը կը տոնէին, այլ նոյնիսկ օտար մամուլը պահ մը լըջօրէն հաւատաց թէ՛ կոմս Լամստորֆի ուղեւորութեան վերջնական արդիւնքը մակեդոնական ազատագրութեան պիտի յանգեր: Դժբախտապէս, այժմ որ կոմս Լամստորֆի իր Վիէննայի արտաքին գործերու պաշտօնակցին ու Ֆրանց-Եօզէֆ կայսեր հետ խորհրդակցելէ ետք Բէլգրադով վերադարձաւ, բոլոր անկախութիւնները, բոլոր ուրախութիւնները անհետանալ կը թուին. Պուլկարներն ու Մակեդոնացիները արդէն մեծապէս ապշեր մնացեր էին՝ յօֆիալի մէջ Ռուսիոյ նկատմամբ իրենց հաւատարմական ու երախտագիտական զգացմանց փոխարէն՝ կոմս Լամստորֆի աւելի քան վերապահալ վարմունքէն. իրենց այդ զուրմանքը ալ աւելի շեշտուեցաւ, երբ տեսան որ կոմս Լամստորֆի մակեդոնացիներու կը կարգար խաղաղութեան, հանգարտութեան, համբերատարութեան տաղտկալի շան քաղցրներ, երբ իրենք զինքը հիւրընկալել կը խորհէին իբր աղատագրութեան աւետիսը բերող պատգամաւոր մը:

Բայց մանաւանդ Վիէննա ըրած իր այցելութեանը միջոցին՝ յայտնապէս, բացորոշապէս տեսնուեցաւ թէ՛ ու է կերպով Լամստորֆի իր թշուառական մէջ Մակեդոնիոյ անկախութիւնը ուրուագծող ծրագիրներ չունէր. ոչ ալ իր Օգոստ.

տափառ Տէրովմէն հրահանգուած էր այդպիսի նպատակաւ կողմնադրելու կոմսին հետ համաձայնութեան մը գալու:

Կոմս Լամստորֆի ինքն իսկ լուստարարեց. թէ, իր ուղեւորութեան մէջ անմտութիւն պիտի ըլլար Մակեդոնական խնդրոյ վերաբերու. թեմադր կարգադրութեան մը ու է միտք տեսնել. թէ, Ռուսիա, աւելի քան բնաւ. Ուստորիոյ հետ համախորհուրդ, կը բաղձար Պուլկարներու վերաբերութեանը 1897ի աւետարանու համաձայնութիւնը ամրապնդել էր, անոր իրաւասութեան շրջանակը ալ աւելի ընդլայնելով:

Այսպէս ուրեմն, մինչ ցնոր տնօրէնութիւն, մակեդոնական խնդրոյն կարգադրութիւնը վերադարձ կրնայ, հայրենական խնդրոյն պէս, անորոշութեան, անստգութեան բաւական մէջ, ուրկէ պահ մը Լամստորֆի ուղեւորութիւնը զայն հաններ էր:

Իսկ մակեդոնական Գոմիթէները, գրգռուած ու յուսախաբ մնացած, աւելի քան հրեք կը պատրաստուին առաջիկայ գարնան իրենց ապստամբական շարժումները վերսկսելու. անոնք կը խորհէին թէ, իրենց այդ անընդհատ գործունէութեանը միայն պիտի կարողանան իրենց ինքնատուրական միջամտութիւն մը յառաջ բերել:

Տ. Է.

ՊՈԼԿԱՐՈՅ ԵԼԵԻՄՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Բաբիգի «Մօնիդէօր տէ Ռանդիէ» ֆինանսական թերթը շահեկան տեսութիւն մը բրած է Պաղատեան տէրութեանց ելեւմտական վիճակին վրայ: Պուլկարիոյ մասին գրուածը օգտակար համարեցինք իրաւունքի ընթերցողներուն ուշադրութեանը ներկայացնել:

Պուլկարիայէն կսկինք, կը գրէ յիշեալ թերթը, որ իր 0/0 5 վերջին փոխառութեամբը շատ խօսել տուաւ իր վրայ: Այս փոխառութիւնը, 106 միլիոն ֆրանքի անուանական արժեւորութեամբ, ինչպէս յայտնի է, սահմանուած էր անհաստատ պարտքը (սեք զօրպաւս), հաստատուն պարտքի վերածելու (գոնսոյիսի) որ շրջաբերութեան մէջ հողող գանձային պոնտիֆիկացիոն շուրջ 80 միլիոն ֆրանքի կը հասնէր: Յիշեալ փոխառութեան, որ իրապէս միլիոն 36,390,000 ֆրանք բերաւ Պուլկար տէրութեան, զլիսաւոր արդիւնքն եղաւ 106 միլիոն մը եւս բարդել հանրային հաստատուն պարտքին վրայ, առանց բնաւ բարւոյնելու ֆինանսական կացութիւնը:

Ինչպէս Պաղատեան միւս փոքր տէրութիւնները, Պուլկարիա եւս ուղեւոր իր տնտեսական զարգացման շրջանի միջոցները կարծել, ձեռնարկեց մեծ եւ երբեմն աւելորդ շինու-

թեանց, եւ հետեւաբար, իր հանրային պարտքը՝ ժողովուրդի ուժին անհամեմատ արագութեամբ աճեցաւ: Պուլկարիա իր անկախութեան առաջին տասը տարիները, 1878էն աւտին, կրցաւ ապրիլ առանց օտար փոխառութեան գիմնելու: Բայց արդէն արտաքին պարտքեր ունէր, ուստի եւ թուրք կառավարութեանց ունեցած պարտքերը, որոնց երկուքը միասին շուրջ 40 միլիոն կը հասնէին:

1885ին էր որ եղաւ առաջին արտաքին փոխառութիւնը՝ Վառնա-Ռուսչուք երկաթուղիի գիծը գնելու համար: Այս փոխառութիւնը, 0/0 6 տոկոսով, 46 777,500 ֆրանքի կը հասնէր: Երկրորդ փոխառութիւնը կատարուեցաւ 1889ին, օտար սէնտիֆայէ մը՝ 30,000,000 անուանական դրամադրով եւ 0/0 6 տոկոսով. յետոյ 1892 ուրիշ փոխառութիւն մըն ալ 0/0 6 ու, 142,780,000 ֆրանքի. որոնց 124,962,500 ֆրանքը միայն շրջաբերութեան հանուեցան: Երկրին հանրային պարտքին մէջ պէտք է հաշուել նաեւ 30 միլիոն ֆրանքի հողագործական փոխառութիւնը 0/0 5 ու, որ 1896ին կատարուեցաւ հողագործական սնտուկներուն դրամադրութեամբ: Երկրին համար եւս զոր հաստատուն պարտքին մէջ չեն հաշուեր. որովհետեւ ատոր կանոնաւոր վճարումը նոյն իսկ այդ սնտուկներէն ապահովուած է, բայց դարձեալ տէրութեան երաշխաւորութեան տակ. նաեւ 25 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը 0/0 5 ու, ծխախոտի տուրքով երաշխաւորուած, որ կատարուեցաւ 1900ին, բայց շատ ծանր պայմաններով. որովհետեւ տարուէ տարի մայր գումարէն ըլլալիք վճարումներն եւ սոկոսը ելեւմտացոյցին վրայ կը բարդեն 7,609,375 ֆրանք, քանի որ վճարման պայմանաժամը կարճ է եւ կը վերջանայ 1905ին:

Պէտք է այս արդէն երկար ցուցակին վրայ աւելցնել ուրիշ կարգ մը ներքին եւ արտաքին փոխառութիւններ՝ զանազան դրամատէրներու խըմբակներէ կատարուած, երբեմն վաշխառական տոկոսներով եւ որոնց բեռը համեմատաբար աւելի ծանր էր քան վերը յիշուածներունը: Ահա ասոնք կը կազմէին անհաստատ պարտքը, որ 1902 յունիս 30ին կը հասնէր 61 միլիոն ֆրանքի եւ տարուէ տարի մեծնալով՝ մեծ չփոթութիւն կը պատճառէր Պուլկար տէրութեան դրամական հաւասարակշռութեան մէջ: Այս անհաստատ պարտքը մ.թ.հ. 1902, ինչպէս նաեւ Ռուսիոյ եւ Թուրքիոյ պարտական մնացած գումարները վճարելու համար էր որ կնքուեցաւ 1902 0/0 5 տոկոսով 106 միլիոնի փոխառութիւնը, երաշխաւորուած ծխախոտի տուրքով: Համառոտելով, այժմ շրջաբերութեան մէջ հողող ամբողջ հանրային պարտքը կը հասնի 283 միլիոն ֆրանքի. արդարեւ այս ծանր բեռ մըն է 3,800,000 բնակչով երկրի մը համար որ իր ապրուստի մեծ մասը հողի մշակութեան կը հանէ եւ կախում ունի գլխաւորաբար հողային արդիւնաբերութեանը: Որովհետեւ արմտիքի աճանութեան է որ երկրին մէջ ոսկի կը մտնայ, շարք մը անբերրի տարիներ իրարու յաջորդելով, ինչպէս, որ արդէն պատահեցաւ, գրաւական նուազութիւն մը կրնան յառաջ բերել, որուն աննպաստ հետեւանքները կը կրէ ամբողջ երկիրը:

Ըսինք որ Պուլկարիոյ հանրային պարտքը 283 միլիոնի կը հասնի: Այս գումարին գրեթէ 112 միլիոնը երկաթուղիի եւ նաւահանգստի շինու-

թեանց գործուեցան: Մնացածը գործածեցին երեսմտացոյցներու մէջ ծախելու գոյցելու, փոխառութեանց տոկոսները վճարելու եւ մայր գումարէն մասնակի վճարումներ ընելու:

(Շատուակելի) Գ. Թ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. ՊՕԼԻՍ, 20 Դեկտ.

Ամսոյ 18ի երեկոյին քաղաքիս «Ուլիթէլաքա Տրուպա»ի սրահին մէջ փաստաբան Տօք. Դանչէֆ բանախօսեց, նիւթ ունենալով Հայաստանի եւ Պուլկարի վերջին կոտորածները: Հայաստանի պատմութեան վրայ կարճ տեսութիւն մը ընելով, գովեց հայ ժողովուրդին ընդունալութիւնները: Բաղդասեց հայ եւ պոլկար գիւղացիներուն վիճակն ու սովորութիւնները եւ շատ մը նմանութիւններ բերաւ երկու ազգերուն մէջ:

«Մենք պէտք է ուսումնասիրենք, ըսաւ յարգելի բանախօսը, մեր երկիրը ընակող բոլոր ազգութիւնները: Մենք մեր երկրին մէջ ունենիք թուրքեր, յոյներ, հայեր, հրէաներ, վրացիներ եւ սերպեր: Պէտք է դիտանք թէ ո՞վ աւելի կամ պակաս բարեկամ է մեզի: Կրնամ հաւատաւոր որ այս տարբեր ազգութիւններէն եթէ կայ ազգ մը, որուն անկեղծ բարեկամութեանը կրնանք վստահիլ, այլ ալ Հայ ազգն է:

Յետոյ՝ Պէքարի «Սուլթանի քաղաքականութիւն» գրքէն եւ Տօքթէօռ Լէփալիսի բանախօսութիւններէն քաղելով, սրտածմոյկ նկարագրութիւնը ըրաւ Հայոց ընդհանուր կոտորածներուն՝ Հայաստանի զանազան քաղաքները եւ Կ. Պօլիս:

Փափաքելի է որ այդպիսի համակարական բանախօսութիւններ հայ ազգին հկատմամբ աւելի ստէպ տեղի ունենային Պուլկարաց մէջ:

ԻՍԼԱՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՆ ԱՌԵՐՈՊԱ

Ե.

Դուք անշուշտ կը զարմանաք թէ՛ բոլոր այս առաւելութիւններով հանդերձ, Իսլամութեան ծոցէն եւրոպական հասկացողութեամբ տակաւին ոչ մէկ յառաջդիմութիւն յառաջ եկած է:

Իսլամութեան այս ամբողջութեանը շարժառիթը հեռունները մի՛ ոյրնէք. առնիկա կը գտնուի այն ճակատագրական անդունդին մէջը, զոր ձեր Եկեղեցիները մեր ու արեւմտեան քաղաքակրթութեան միջեւ փորած են:

Մեր Իւլեմաները, ինչպէս արդէն ըսինք, գրգռուած, զայրացած ձեր «Երրորդական» վարդապետութիւններէն, կանոնաւորաբար մեկուսացան ձեր քրիստոնեայն աշխարհին իմացական շարժման հետ ու է հաղորդակցութեանէ: Միմիայն իրենց ասուածաբանական վիճաբանութեանցը մէջ թաղուած, անոնք անզգայապէս մթազնեցին Իսլամութեան յառաջդիմութեան ոգին. ու այն ատեն, ասիական բռնակալութեան ճիւղաւ, միշտ իր զոհերը դիշատելու պատրաստ, աղասօրէն մեր երկրներուն վրայ խոյացաւ, խղճելով կեանքի բոլոր սկզբունքները, ցամքեցնելով յառաջդիմութեան:

Թեան բոլոր հոգիները ու մեր բոլոր ժողովուրդները ծածկելով անվերջա- նալի խաւարով մը՝ բռնի տգիտու- թիւն, որ իսլամութեան ամօթ ու վիշտ միայն կրնայ պատճառել:

* * Աւելի չծանրանալ այս տխուր պարագաներուն վրայ, որոնք մեր պատմութիւնը այնքան նսեմացուցին:

Այսպիսի փոխուած է: Արագ հաղորդակցութիւններն ու կրթութեան ընդհանուր տարածումը մեր բոլոր ժողովուրդներուն մէջ յա- ռաջ բերին ուսումնասինելու հետեւող- ներ գտնելու վարժուած բնորոշ դա- սակարգ մը: Մեր նորատի թուրքերը, մեր Պապիները, մեր նորակազմ միա- բանութիւնները, մեր բոլոր աղանդ- ները, զանազան ձեւերու ներքեւ, ու գեղարուած են քայլելու նոյն անհրա- ժեշտութեամբ, նոյն մտածմունքով:

Դէպի ի՞նչ նպատակ: Դէպի քրիստոնեայ քաղաքակրթու- թիւնը արգիւտը: Երբէ՞ք:

Հազար անգամ կը կրկնենք, ձեր կրօնական հասկացողութեան հետ մեր համաձայնութիւնը բոլորովին անկա- րելի է: Յառաջդիմութեանց աշխար- հին հետ մեր հաշտութիւնը թոյլատրե- լու կարող մէկ ուղի միայն կայ, ու կրնայ ըլլալ այդ ալ կրկնայ, եթէ Եւրոպան մեզի ներկայացնէ «աշխար- հական» քաղաքակրթութիւն մը, «եր- րորդական» ու եւէ կապակցութեան թուրքովին անկախ:

Բայց ո՞ր գտնել Եւրոպայի մէջ այս- պիսի քաղաքակրթութիւն մը:

Մենք ամէն կողմեր կը տեսնենք ծանր պատճառներ, որոնք ձեր միա- պետներէն ոչ մէկուն կը թոյլատրեն որ իրենց դատը հաստատուած Եկեղեցի- ներու դատէն անջատեն:

Անգլիոյ թագաւորը քրիստոնէական հաստատութիւն պաշտօնապէս կը հովանա-ւորէ:

Ռուսիոյ կայսրը Օրթոտոքսութեան կրօնապետն է:

Գերմանիոյ կայսրը, Սուլթանին անձնական բարեկամը, մեզից ցոյց կուտայ մէկ ձեռքովը իր սուրը, ու միւս ձեռքովը Աւետարանը:

Իտալիան Պապականութեան հայրե-

նիքն ու մայրաքաղաքն է:

Ձեր բոլոր պետութիւնները տիրա- կանօրէն, բացարձակօրէն ինչը իս- լամութեան դէմ կը կանգնեցնեն:

Միակ ժողովուրդ մը միայն Եւրո- պայի մէջ բացառիկ դիրքի մը տիրա- ցած էր:

Այն ալ Ֆրանսան էր: Մեծաքանակ զէպք մը, գուցէ երկ- րագունտի մեծագոյնը, Ֆրանսան նոր աշխարհի մը առաջնայլ հանդիսացու- ցած էր: Այդ մեծ զէպքը, զոր այնքան թիւը կերպով Ֆրանսական Յեղափո- խութիւն կանուանէք, կրօնքներ ստեղծող մեր Ասիան զայն պիտի հրո- չակէր, առանց վարանումի, «կրօնք տիեզերական բանականութեան»: Ա- նիկա ոչ առանձնական մարգարէի մը յայտնութիւնը եղաւ, ոչ ալ միակ սերունդի մը գործը՝ այլ մեծ պայ- թումը այն յաւիտեական ճշմարտու- թեան՝ զոր բոլոր առաքելները բե- րած էին, ու որոնք դարեւ ի վեր տառապեալ մարդկութեան կուրծքին մէջը ճնշուած կը մնային:

Չէ թէ անոր ժողովրդային բռնու- թեանցը ու ծայրայեղութեանցը կը հաւանինք: Մեր հոս ցոյց տալիքը՝ այդ մեծ շարժումին Արեւելքի մեծ ժողո- վուրդներուն երկարատեւ բաղձանք- ներուն հետ ունեցած կատարեալ նոյ- նութիւնն է: Անոր հրապարակած ճշ- մարտութիւնները մեր ալ ճշմարտու- թիւններն էին: Նոյն գերագոյն էակը, նոյն տիեզերական բանականութիւնը, նոյն արդարութիւնը, իրաւունքի նոյն տիրապետութիւնը, զոր դարե- րու տրամաբանութիւնը ու գիւցազն սերունդի մը հանձարը բանաձեւու- թեանց կը վերածէր:

ԵՔՅԱ ԱՊՏԻԼ-ՀԱՔ ՊԱՆՏՍԻ

(Շարունակելի)

Պուլկարներու Ծննդեան Տօնին ա- ռիթմով, տպարանները գոց ըլլալով, Չորեքշաբթի օր Իրաւունքի չհրատա- րակուեցաւ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժամհարեանի եղբրական վախճանին առթիւ, Մինաս Չերազ Լ'Առմէնի վերջին թիւին մէջ հետեւեալ տողերը կը գրէ.

Այսպէս ուրիշն, այն «Ենի- չէրի»ները, որոնք չէին յաջողեր Պ. Ի. Ժամհարեանցէն 30,000 բուլկի շորթելու, վրէժին կառ- նին սպաննելով պատուական հայ մը, որ իր քսակովը ձեռնտու ե- ղած էր քաղաքի չքաւոր բն- տանիքներու, Մարաշի մէջ 200 աշակերտով Որբանոց մը կանգուն պահեց, եկեղեցիներ, վանքեր ու մատենադարաններ դրամական նը- պաստներով օժտեց, օգնեց չքա-ւոր խմբագիրներու և գրագէտ- ներու, քաջայերեց վարժապետ- եան մը, խրիմեան մը, Իզմիրեան մը ու բոլոր այն Հայերը, որոնք ջանացին, առանց խիստ միջոցնե- րու դիմելու, Հայերու բախտը բարեօքել, ու Շուշիի մէջ հիմնեց հիւանդանոց մը որ անոր 200,000 բուլկի նստաւ: Բառերը մեզի կը պակսին, կաւիցնէ մեր Բարիքի պաշտօնակիցը, այսպիսի եղեռնա- գործութեան մը համար մեր զրգ ունեք յայտնելու:

— Սպանութեան դէպքի մը առ- թիւ Մուշի մէջ երկար ժամանակէ ի վեր բանտարկուած Դոմա Գիւղացի տասը Հայերու դատաւարութիւնը տեղի ունեցաւ. անոնցմէ հինգը ազատ արձակուեցան և հինգը յանցաւոր ճանչցուեցան:

— Դարա Գիւղացի ազգայինք խնդրած են Պատրիարքէն որ կոն- դակով մը խրատէ տեղւոյն ժողո- վուրդը և արգիլէ պաշտօնի սովորութիւնը, որ երբեմն գաւառնե- րու մէջ դեռ կը շարունակուի:

այսինքն երիտասարդ մը ամուս- նանալու ատեն պարտաւորուած է աղջկանը հօրը քանի մը հազար դահեկան վճարել: Կրտսէ թէ այս վատ սովորութեան պատճառով խել մը հայ աղջիկներ դաւանափոխու- թեան կը դիմեն:

— Ֆիլիպէ Դոլոսյ թերթերուն իմացուցած են թէ, ծանօթ հայ ընտանիքէ Արամ անունով երի- տասարդ մը պուլկար աղջկան մը հետ ամուսնացած է պուլկարական ծէսով: Կը պատուի թէ այդ ե- րիտասարդը պուլկարուհուն հետ նախ կատակի ձեւով սիրաբանու- թեան սկսած ու յետոյ կատակը իրականութեան փոխելով, տեղի տուած է որ աղջկան ծնողքը զինք դատարանին յանձնեն. դատարանը յետ քննութեան վճռած է կամ 300 ոսկի վճարել աղջկան և կամ զանի կնութեան առնել: Երիտա- սարդը հարկադրուած է պուլկար ծէսով պսակուիլ անոր հետ:

— Վաղը, կիրակի գիշեր, Սանդ- րալի սրահին մէջ «Նատէժտա» հայ թատերախումբը պիտի ներ- կայացնէ, ինչպստ իր յարգելի վարիչին, Տ. Վ. Պապեանի, Շէքսպիրի Մ'Ակտիւթը:

Յուսալի է որ թատերասէր հա- տարակութիւնը, որ միշտ փութաց այս հայ թատերախումբը խրա- խուսել, պիտի ուզէ այս անգամ ալ իր ձեռնարկութիւնը չը զլանալ, մասնաւորապէս նկատողութեան առնելով նպաստաւորեալին փա- փուկ կացութիւնը, որ թատերա- խմբին գոյութիւնը կանգուն պա- հելու համար ծանրածանր զոհօ- դութիւններ յանձն առաւ:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(42)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ


ԱՌԱՔԵԼ ԻՓԵՆՏԻՆ

Ժամ մը անցած էր: Վալի փաշա խոռովուած եղանակով մը ոտքի ելաւ պահ մը, դահլիճին մեծ պատուհանը բացաւ ու աշ- քին առջեւը պարզուած յանկուցիչ տեսարանին վրայ նայեցաւ: Այդ տեսարանը Վանայ Այգեհտան կոչուած ար- ուարձանն էր, որ հրաշագեղ երեւոյթի մը ներքեւ կը պատկերանար: — Ի՞նչու ուշացաւ, գոչեց վալի փաշան ինքնի- րեն: Արդեօ՞ք տունը չէր: Ու բարկացած շարժումով մը գոցեց պատուհանը եւ սկսաւ դահլիճին մէջ մտն գալ: Իրաւորը մը ետքը՝ կամաց ձայնով մը դահլիճին դուռը զարնուեցաւ: — Մտէ՛ք, ձայնեց վալի փաշա: Եկողը մեր ծանօթ Առաքել էֆէնտին էր, որ մանկամարդ Լուսիայի աղաչանքով փրկած էր իր կեանքը Վանականին դաշոյնէն:

— Ո՞ր էք, Առաքել էֆէնտին, հարցուց վալի փաշա մտերմական բայց աղղու չեղողով մը: Առաքել էֆէնտին անվրդով նայուածք մը սեւե-ւեց փաշային վրայ ու չպատասխանեց: — Շարաթ մըն է որ չէք երեւար, վրայ բերաւ վալին՝ իր կեղծ ու խորամանկ բացատրութեամբ մը: Ի՞նչ եղաք... ո՞ր միացիք: Իմադածիս նայե- լով՝ վախէ՞ք քաշուած կապիտալ Հա՞... Առաքել էֆէնտին իր ճպոտ աչքերը բանալով՝ մրմնջեց. — Չափազանց զրաղած էի. փաշա էֆէնտին՝ այդ պատճառաւ դուրս չէի հիւներ: Որմէ՞ պիտի վախ- նամ: — Ի՞նչ գիտնամ... կըսեն թէ հայ գոմիթաճինե- րով լեցուած է քաղաքը, առարկեց հաստ-վիզ փա- շան՝ իր շրթանք վրայ հեգնական ժպիտ մը սա- հեցնելով: — Գոմիթաճի՞... գոչեց Առաքել էֆէնտին՝ ա- պուշ ձեւ մը ընելով: — Այո՛: — Մնա՞ք ատանկ գաղափար մը... ըստ իս, ա- նոնց արմատն անգամ չորցաւ: Վալի փաշա գլուխը շարժեց ու զայրոյթի մը ամբողջ արտայայտութեամբ ըսաւ. — Ո՛չ, Առաքել էֆէնտին, կա՛մ դուք կը խաբ- ուիք եւ կա՛մ թէ խաբել կուզէք զիս: — Ձեր վսեմութիւնն ի՞նչ պատճառ ունի այդպէս կասկածելու: — Կը կասկածիմ, որովհետեւ ձեր տուած տեղե- կագիրը համաձայն չէ տեղի ունեցած իրականու- թեան:

— Ինչպէ՞ս: — Դուք չվստահացուցի՞ք ինծի թէ հանդարտ է ժողովուրդը: — Այո՛: — Դուք չհաւատացուցի՞ք ինծի թէ քաղաքացիին մատ չունի ներկայ խոռվութեանց մէջ: — Ճշմարիտ է: — Լաւ ուրեմն, հանդարտ է ժողովուրդը... մատ չունի՞ քաղաքացիին ա՛յն մթին դարձուածք- ներու մէջ զոր կոյրն անգամ կը տեսնէ... Ը- սէ՛ք, դե՛ռ ինչպէս համոզուիմ... Ի՞նչպէս չայա- նեմ թէ՛ կամ դուք խաբուած էք կամ խաբել կու- զէք զիս: Առաքել էֆէնտին, որ թրքական բարքերով սնած ու անոր հոգեկան զրուլութիւնը իւրացնելով հասած էր այդ վիճակին, անմիջապէս խորաման- կութիւնը ձեռք առաւ՝ ինքզինքը փրկելու հա- մար:

(Շարունակելի)



 Կազմեալ պետեղենի էլան
էտեմմէի՞ջ օլան ապօնէլէրիւի՞զին
պիլա քէէխիւր պօրձարընը կեօն-
տէրմէլէրի րէձա օլընըր : Մէնէ խի-
քաւն պոշաք :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ո.
Մաքերունիա. — Գօնթ լամս.
տօրֆ Բէթրսպուրկա ելթիշմիթ
տիր: Մէրգում վիէննաւտա պու.
լընտըր էննատէ Մաքէթոնիանըն
օթօնօմիսի իշին ւալէնէն պիր սեօզ
սէօլլէմէմիշ տիր. ֆագաթ վիէննա
նալա մուվաակէթիին իքինճի կր.
ճէսի Գօնթ լամստօրֆ բուս սէ
ֆարէթհանէսինտէ կօլուխովքի
իլէ զայլէթ ուզուն միւլագաթտա
պուլընմըշ վէ իքի նազրբրն պու
միւլագաթլարըր էսնաւընտա հալը.
նըր բուս էլշիսի հազըր պուլընմըշ
տըր: Պու իւշ զէվաթըն կիճէնին
կէճ վագըթլարըննա գատար նէ մէ.
սէլէլէրտէն պահս իթիթիլէրի սըրըր
գալմագտա տըր: Տիկէր միւլա.
գաթլարտա օլըննա մուպահասալար
իլիթիլալա մէյտան վէրմէմէք վէ
պալգանլարտա Սքարնշ-քօլը մու.
հաֆաղա իթմէք մագսէտիւտէն իւ
պարէթ իօրիլէր. ֆագաթ Մաքէ.
թոնիայա օթօնօմի վէրմէք սքա.
րնշ-քօլը պօզմագ առտ օլընմուգ,
վէ իլիթիլալա մէյտան վէրմէմէք
իշինն տախի Մաքէթոնիա մէսէլէ
սինի քեսֆի պիր տէրէճէտէ հալ
իթմէք, եանի իլիթիլալ սէպէպլէ
րինի, զուլմը մէյտանտան գալ.
տըրմագ լագըմ կէլիր: Նիհայլէթ
եագընէն մուէսիր լէտպիրլէր էլէ
ալըննաճաղը շիւրհէսիզ կէօրիւնի
յօր. աքսի հալինտէ Մաքէթոնիա
գօմիթէսինին ըսնան գալտըրմագ.
տան կէրի գալմալաճաղլարըր կի.
պի, պուկալ հիւքըմէթի տախի
միլլէթին խահիշ վէ հարէքհաթը.
նը մէնն իթմէկէ մուլաֆագ օլա.
մալաճաղ կէօրիւնիյօր. պագա.
լըմ:

— Ախրիբէն Մ'աքէթոնիա վիւ-
յէթլէրիհաէ իսլահաթ իթրա իթ-
մէք իչիւն ումոււմ Վուֆէթիչ թա-
յին օլընան Հիւսէյին Հիւմի բաշա
պիր չօգ իգթիտարսըզ մէմուրլա-
րըն լիսթասընը չըգարուպ, անլէ.
րին ազլ օլընմասընըն իգթիզա-
սընը եւրլըզա տրզ իթմիչ տիր.
Ֆրագաթ սօն մալիւմաթա կէօրէ,
Հիւմի բաշանըն պու թէքիֆինէ
եւրլըզտա էհէմմիյէթ վէրիւմէմիչ
վէ մէզքիւր լիսթա մինտէր ալթը
օլմուչ տրր:

— Սթանպօլտան թաւա եա.
զըլան պիր մէքթուպըն միւնտէ.
րէճաթը մուխթասարէն շուրայա
տէրճ իտէյիմ.

Շու' սըրա թիւքէրին Բուսլար իւէ
տօսթանէ տաւրանմայա իգթիզաւարը
օտարդնա մուղայիւր օյարազ, իքի

կենի վուգուաթ արգա արգայա անլէ-
րին բանաթընը պողտու։ Պիրիհիսի
Ջարըն իսմի Այ Նիքոլա կիւնիւ, ա-
տէթ իւզըն Չ1 տէֆա թօր աթմազ
լազըմ իքէն, պու վազգիֆէի իմա-
լաէճէք օլան թիւալք վարօրը թօրլարը
աթէչլէյէմէտի։ Ռուս էլչիսի իզանաթ
իսթէմէսիտէ, վարօրըն զօմանտանը
ճէվապ վէրտի քի չպարութ պողու-
մուչ օլարդընտան լազըմ օլարդը սորա
աթէչլ ալմատը։) Պագաթ զօմանտա-
նըն պու ճէվապը ճէրտիսիին գուր-
գարաթաթըմ վէ մլուրիյէթաէն ազը
օլընտը, վէ էրթէսի կիւնիւ խարի-
ճիէ նազըրը ռուս սէֆարէթինէ կի-
տուպ, Մ. Ջինովիէֆտէն պու գու-
սուբտան տօլայը աֆլ թալէպ իթտի-
իքինճի։ Աճէմ-թիւրք մինօրընա
եազըն պուլընան Պայագիտ միւթլա-
րըֆը աաթի ալըն պիր գուսուրտա
գուլընտը։ ատէթ իւզըն, միւթէսա-
րըֆըն ռուս զօնտօլարնա թէպրիքէ
կիթմէսի լազըմ իքէն, ռեհու թմուչ
վէ եախօտ հէրնէ սէպէպտէն իսէ,
թէպրիքէ կիթմէմիչ։ Պուհուսն իչիւն
միւ թէսաթիֆա տաթի ազլ օլըն-
տը վէ խարիճիէ նազըրը Մ. Ջինո-
վիէֆտէն աֆլ թալէպ իթտի։

Պէճրլիստէքի Օսմանլը սէֆարէթի-
նին աթաշէ յիլիթէրի Հաւտի պէյ
պիր վագըթտան պէրու Սթանպուլ-
չաղըրըվը ըսը: Հրաքայաթը սէրպէս-
տիէսինաէն տուայը: մէրգոսըն Սթան-
պուլտան թէպիտինէ (հոռացնել) երլ-
տըզտան ցարսը վէրլիմիշ օլմաղէ,
տէօրտինհի էրգըրուս օրտուսընա կիթ-
մէսի իշիւն անա էմը վէրլիտի: Թիւրք
պանտէրաթը թաշըլյան պիր րուս վա-
րըրնա մէրգուսըն բինտարուպ հանը-
նա պիր խաֆիյէ գօլտուար:

Վարոր Տրապիզոնա կիթմէք իջիւն
 եօլա չըգտըւ . ֆազաթ Սամսօնա եէ-
 թիչմէգտէն էվլէյ Հիւմի պէյ զայպ
 օլաու : Րէֆազաթընտա պուլընան
 խաֆիյէ անըն նէրէտէ,գալտըղընը պիւ-
 մէմ տէտիւ : Սամսօնտա վարորըն հա-
 բէքէթի իէէէխիւր օլընտը , գարիթանը
 ելըլտըգտան կիտէն էմիւր իւզըն հապս
 օլընտը : Նիհայէք 24 սաաթ սօնրա
 գարիթիթան սէրպէսթ պըրնազըուպ վա-
 րորն եօլա չըվսաընա իջիւն վիերիւ-
 տիւ :

Ղայրը Համաի պէյ ունըրովը՝
պիր կիւն անըն ճէսէտի տէ՛րիդտէ
Պաւաղա եազըն պուրնտը՝ իւզէրին
տէ ալթուն գօլտօնլը պիր սաաթ վէ
1000 լիրալը պիր չէք վար ըտը՝
Ծիրանի անլալըվայօր քի պիր ալ տէ-
նիդտէ գաթըլ օլան էօլի նիւն իւզէ-
րինտէ չէք նաաըլ սազլանմըլ՝ քէզա
մէրգում նէ՞ սուրէթտէ էօլմիւլէ, քէնտի
քէնտիսինի մի՞ տէնիդէ աթմըլ, հա-
խօտ գազադէն մը տիւնվիւլ վէ եախօտ
պալազաա՞մը աթմըլ։ Պու սըր հիւ
անխայրմալաճադ կէօրինիօր։

Պու սրբոր Երտրղտաքի ճան,
Վերլեր բէք էլի պիլիւլեր :

SUBTLET

Կէշէն եազըն Մաքթթոնիատա
ալլարճ թիւրք ասքերէէինէ վէ
պաշպօզուզլարա գարշը ըսեան
սանճաղընը գահրամանանէ մու-
հաֆագա իթմիշ օլան Բօլքովիք
եանքով տիւն շէհրիմիզէ մուվա-
սէլէթ իթտի, Մուսմաիլէյհ Կէլ-
տիկի սոտթ Սանթրալ սալօնընա
կիրուպ քէնտիսինի գարշըլամըշ
օլան էհալիէ թէշէքիւրինի պէ-
յանլէ, Մաքթթոնիա իշին հիշ
քիմսէնին նասահաթրնր տինլէմէ-

յուպ քսաննա տէվում խոհէքէ-
րինի մութ խոսարէն աւլաթառ :
Մէսմուսթա կէօրէ , Մ' , Եանքոյ
2—3 կիւն շէն , իժիլտէ գայսճագ
վէ մուսլին պիք ստաթտա իրաւոր
նուսթգ խոհէք իսիյ :

— ԿԵԼԷՆ ՀԱՓԹԻՄ ԱՎԵՐԱՆԻԷՄԵ
ՄԱՅԻՆ ԵՆՈՐՐԵՐ ՄՈՐԱՓՈԿԱԿԻՐ
ՄԵԿԱՆԵ ՏԵՎԱԷՆ ՄԵՄԻԶ ՄԻՐ .
«ՕՐԱԿԻՐԻ ԶԻ ԽԱԳՐԵՄԱՆ ՀԻՔԻՒ-
ՄԵԹ ԳՆԱՎԷԻ ՍԱՔԵՐԻՆ ԻՅԻՆ» .
ԱԵՆԻՍԻՔ ԱԿԻՐ ՄԵԿԱՅՈՂ ԻՍԺԵՆԻՆ» .

Տէմէք մէտէր... վար...
— Սօֆիտաւոր թաւա իրպար
օլընտրընն պինաէն, գօթ լա
մատօրֆ օրատա պուլընտրըր էս
նատէ, մաքէթօնրալըր գօմիթէլըրին
հարէքտաթընր մէնն ու թաթիլ
իթմէք իչիւն պիր գօշ տէֆտար
նատահաթ վէրմիչ, վէ Բուսթանըն
վէ Աւստրիանըն Սթանպուլտա հէր
նէվ միտախէլէօի անլէրին ագի
յանէ տօվրանմար շարթընա միւս
թէնիտ տիր տէմիչ, Յաթաթ տի
կէր թարաֆտան թէէսիլլի պիր
գօթ լամատօրֆա ճէվապէն՝ «Պոյ
կար հիւքիւմէթի, հէր հանկը
բարթիտէն միւթէչէքիլ օլտա,
Մաքէթօնրա հալինի իպահ իչիւն
օրատա միւքէմմէլ րէֆօրմա լճա
օլընմատրգճա, հիչ պիր հիւքիւ
մէթ հօրէքէթի զապթ իտէմէլէ-
ճէք» տէմիչ տիր

— Ս. Ծուռնդ միևսասիպէ՛նի իլէ՛ Սօֆրատա՛ Տէ՛ն Թա՛վան Սա՛ղա-
կունի քահանայ՝ վիւքէլո՛ րէյիսի
Ս. Տանէվի թէպրիքէ կիթմէ-
սինտէ, միւշտիլէյն Պուլկարիա
տաքի միլլէթտաշարը՝ խի
թապ պապը նասահաթարտա պու-
ըմը վէ տէմիշ տիր «Պուլկար
հիւքիւմէթի Հըմէնիլէր իլէ խալի-
խահանէ տապրանտը. ֆագաթ
պունլար թէվէ» ճուշումը սուի
խթիմալ իթտիլէր, վէ չօգ տէֆա
խագը՝ մագ հալէքէթլէր վէ պօշ
միւճատլիլէր իլէ հիւքիւմէթին
ըրգագաթը՝ իւզէրլէրինէ տապէթ
նտէյօրլուր. Պուլկարիանն մի-
սաֆիրրէրվէրլիկինտէն վէ սէրպէսթ
գանուկարընտան իսթիֆատէ ի
տէճէք հէրտէ, պիր պիրինէ սի-
նահ աթմագ, գաթլ իթմէք, գալ
վալար չըգարմագ տէրէճէսինէ գա-
տար իլէրի կիթաիլէր. պու հալ-
էր պիղէ իգըահ կէթիլիլ. Պիլ-
տիլրին էրմէնի էհալսինէ քի րա-
հաթ վէ սիւքիւնէթլէ եաշտըն-
տը. պուլկար հիւքիւմէթի հէր
տայիմ քէնտիլէրինէ խայրէթխահ
պուլլնահագ տըր» :

Իշխեալ պիտ գալ չաբգընլարմըզ
 իշխիթսինլէր . քէնտի տաէպ
 ինզլիքլէրի իւէ պիւթիւն սիւլէթին
 համի յէքէնիյօր :

ԱՃԻՄԻԱՏԱՆ.

Թէհրանտան պիտորիւտիկինէ
պին սէն, գարը ելպիսէսի իլէ պիր
ստամ Շահըն գարըսընա չըգուպ
սնըն իւզէրինէ իւզ տէֆա աթէշ
իթմիշ իսէտէ գուրշուն իսապէթ
իթմէսիշ տիր :

— Շահ սէրայ գաստընլարընտան
1640ը իիւրան իառապ, անլէրի մէ-
մուրարա վէ վիւզէրասընա վէր.
միշ տիր, Սալիւմ օլտըղը իւզըն
թիւրքլէր վէ աճէմլէր էնտինտէ
սէրայտան չոգան գաստընլար բէք
մազպուլ տրր, Շիմտի Շահնն սէ-
րայընտա հարինըզ 60 գաստըն զալ-
մըշ տրր:

ՈՐ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Տիւնտէն պերու շէհրիիզտէ
պուլընան Բոլքըմիք Եանքով ազ-
շամ գտպույ իթոիկի պիր թէյէ-
կրաֆնամէ ի պէրհէն՝ պու կիւն
Էօլէն գաթարք իլէ, պազը պե-
պովըլէ պերապեր շէհրիիզտէն
միւֆարէքէթ իթտի Ուսմոււթա
պիւսէն, Ուֆիալա չիտէյօրյար

ۛۛۛ

Որքա՛րնամս կազանդի առթի՛ւ հրապարակ հանած է նուէ՛րի եւ շնորհաւորութիւնան քարտեր, որոնց վրայ թրքերազի եւ ռուսաճայ նշանաւոր հայ ճաշափոխական հիօրսներու, կաթնղեկութներու, պատարաքներու, բաւերարներու, քանաստեղծներու, գրբարական մշակներու, հասարակական գործիչներու, արուեստագէտներու, դիտուներու, զօրաքարներու եւ պետական անձանց զէսքեր նկարուած ինչպա նուր քր կերպով:

Կը ծախուի Տ. Զարպհանէլեանի քով .
սեռին (9 հաս) 1 ֆր. իսկ ուրիշ տեղե-
րէ պէտք է զրկեն 1 ֆ. եւ 15 սան-
դիմի փոստի փուլ :

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
(ԿՆԻՔ)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Նորածին երախաները լաւ խնամ-
վելու համար խիստ օգտակար խրատ-
ներ պարունակող պուլկարերէն գիրք
մը հեղինակած է Տօթթ. Սիէննէն Թ.
ՔՕՔՈՎ, ժամանակէտ միզանցքային
հիւանդութեանց եւ ժանկաբարձ, որ
Մօնթէլէի համալսարանէն Ա. մրցա-
նակը ստացած է եւ Պուլկարային մէջ
ի բարձր պաշտօնավարութեանց
համար պատմաւորական քննդնած:

ԳՐՔԻՆ ԳԻՆՆ Է 50 ՍՆԴ .

Կը ծախուի ի հեղինակին քով ու իյ .
հէնչէվի վաճառատունը :

“ՎԱԶԳԻՆ, ԵՐԳԱՐԱՆ

600 երեսէ բաղկացած, 300էն աւելի երգեր, նշանաւոր գործիչներու կենսագրութիւններ ու լուսանկարներ կը պարունակէ իր մէջ:

Գոյացած հասոյթը յատկացուած է
զուտ բարեսիրական գործի մը :

Ամէն դասակարգին դիւրամատչելի
ըլլալու համար որոշուած է ծախուել
5 ֆրանքի: Դիմել առ 7—16

Յ. Կ. Ճանկիրեան
(Պուլկարիա) Վառնա

ԱՐՄԵՆԻՍ. ԼԻՆԶԻ. — Հ. Ֆ. Բ.
Լինչի, պատկերովն եւ ինքնակեն-
սագրով Լեւոնի. Գրեթ Գ. Տոնասեան.

Կան. գինն ճանապարհածախսով 3
Ֆուսան Բ. ռեմիտ սպիտակաբուրդովին՝

117 Կօսովեկն Քօս - Լոնսոն W
6-8

Огневский Н. Погибает

Изд. на Хр. Н. Войниковъ—Варна

THE UNIVERSITY OF CHICAGO